

ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ 50ԱՄԵԱԿԻ ՅՈՐԲԵԼԵԱՆԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

ԵՒԱ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ

mnacakanyaneva@mail.ru

1900ականների երկրորդ և 1910ականների առաջին կեսերի տասնամեայ շրջանը հայ ժողովրդի կեանքում նշանաւորում է հոգեւոր վերածնության ճիգերով՝ ինչպէս արեւելահայ, այնպէս էլ արեւմտահայ հատուածներում: Աննախընթաց աշխուժանում է մշակութային կեանքը: Մտաւորականութիւնն աշխատում է օգտագործել ամէն առիթ՝ հանրային հետաքրքրութիւն արթնացնելու համար հայ հին ու նոր հոգեւոր արժէքների նկատմամբ: Առանձին աշխուժութիւն է նկատում յատկապէս գրական կեանքում՝ ոչ միայն բուն ստեղծագործական, այլև ստեղծուած արժէքների վերլուծութեան ու իմաստատրման ոլորտներում: Այդ առիթով բուռն բանավեճեր են սկսում պարբերական մամուլում, գործնական քննարկումներ են տեղի ունենում նշանակալից գրական երեւոյթների շուրջ (օրինակ՝ Լեւոն Շանյիսի *Հին Ասորաւծների* գրական «դատը» Թիֆլիսում 1913 Փետրուարի 3ին եւ Պոլսում գրական ասուլիսների շարքը): Երեկոյթներ, ցերեկոյթներ, տարբեր տեսակի հանդիսութիւններ են կազմակերպւում նուիրում հայ եւ համաշխարհային գրական մեծութիւններին, ինչպէս՝ Սիքայէլ Նալբանդեան, Րաֆֆի, Ծերեց, Շեքսպիր, Սերվանտես եւ ուրիշներ: Յաճախողէ՛ք են դառնում գործող հեղինակների մեծարման երեկոյներն ու յորբելեանական հանդէսները, որոնք կազմակերպւում են մեծ մասամբ Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան կողմից՝ նախագահ Յովհաննէս Թումանեանի նախաձեռնութեամբ¹: Յատկապէս Շիրվանզադէի գրական գործունէութեան 35ամեակը 1911ին, լայն արծագանգ է գտնում նաեւ Պոլսի մտաւորական շրջաններում:

Թումանեանն առհասարակ կարեւորում էր այդպիսի հանդիսութիւններն, որպէս ազգային մշակոյթի աչքի ընկնող արժէքները ժողովրդին ճանաչելի դարձնելու լաւագոյն միջոցի, միայն զգուշացնում էր *«արժանաւորի ու անարժանի, գեղեցկի ու քրքրի, լալի ու վալիի տխուր շփոթութիւնից»*²: «Յորբելեանների Դէս» յօդուածում, նա նկատում է՝ մեծածիր յորբելեանական հանդիսութիւնները «ազգային աղէտի բնատրոյթին» չպէտք է կրեն. դրանք պէտք է կատարուեն միայն հանրային ճանաչման արժանացած իրական մեծութիւնների համար. միւս արժանատւորներին պէտք է յարգանքի տուրք մատուցել ըստ «պատշաճատրութեան, վայելչութեան»³:

Այս գիտակցութեամբ էլ նա լուրջ չէր ընդունում ընկերների ու բարեկամների յաճախակի ակնարկները՝ հանդիսատրութեամբ նշելու իր ծննդեան 50 եւ գրական գործունէութեան 30ամեայ յորբելանները:

Այնուամենայնիւ, 1919ի Փետրուար-Մարտին համաժողովրդական մեծ խանդավառութեամբ նշում է Թումանեանի ծննդեան 50ամեակը: Այդ խանդավառութիւնը անսպասելի էր թերեւս միայն իր՝ յոբելեարի համար: «Ակամայից ընկայ յոբելեանի մէջ,- գրում է նա իր բարեկամ Յակոբ Սահլեանին,- որից էնքան շարք էի վախենում: Եւ ահա երկու շաբաթուայ մի ցուցակ են դրել գրպանումս, թէ ամէն օր որպեղ եմ լինելու: Այժմ ես էլ մի տեսակ թամաշատու եմ դարձել եւ զարմանում եմ երկու բանի վրայ, մէկ՝ թէ ինչքան կենսունակ է մեր ժողովուրդը եւ բնաւ յուսահարուել չգիտի, մէկ էլ՝ թէ ինչքան զօրեղ է ժողովուրդների մէջ համերաշխութեան ու եղբայրութեան զգացմունքը: Հենց նոր մօտս էր մի պարզամտութիւն - հայերից, ռուսներից, վրացիներից, թուրքերից ու հրեաներից եւ յապկապէս նրա համար, որ ես եղբայրութիւն ու համերաշխութիւն եմ սիրեք»⁴:

Պատահական չէ, որ բանաստեղծն իրեն ուղղումը մեծարանքի այդ ցոյցերը բացատրում էր վերջին երկու հանգամանքով: Թումանեանին, իհարկէ, չի կարելի հանդիմանել կեղծ համեստութեան համար. նա լաւ էր ճանաչում ինքն իրեն եւ իր համար ի վերուստ սահմանուած առաքելութեան խորհուրդը, բայց գիտէր նաեւ, որ դեռ չի կարողացել լիովին հատուցել այն պարտքը, որ իբրեւ ստեղծագործող ունէր իր ժողովրդի եւ աշխարհի հանդէպ: Դրա համար էլ յոբելեանական այդ խանդավառութիւնը զարմանքով ու ներողամիտ ժպիտով էր ընդունում:

Յիշել եւ մեծարել որեւէ գործչի, ինչպէս ասում էր Թումանեանը, նշանակում է նրանով բարձրանալ ու մեծարուել: Այս հաւաքական գիտակցութեամբ էլ բանաստեղծի յոբելեանը վերածում է համաժողովրդական ինքնաբերական, աննախադէպ տօնահանդէսի. ի տարբերութիւն մնացած յոբելեանների, կազմակերպւում էր ինքնաբերաբար, ներքին մղումով, առանց հրահանգների, յատուկ որոշումների ու միջամտութիւնների: Յոբելեանական տարատեսակ հաւաքներ էին կազմակերպւում աշակերտներն ու ուսուցիչները, ուսանողներն ու դասախօսները, գրողներն ու գիտնականները, հասարակական ու քաղաքական գործիչները, քաղաքաբնակ ու գիւղաբնակ շարքային ընթերցողները, համակիրներն ու երկրպագուները: «Զէ՛ որ դա,- ինչպէս իրաւացիօրէն նկատում է ուսումնասիրողը,- ոչ թէ տվորական յոբելեան էր, այլ ժողովրդի ինքնաճանաչման եւ ինքնահաստատման մի իրողութիւն, որի կարիքն այնքան զգում էր 1919 թուականի հայրութիւնը»⁵: Միջոցառումները յաջորդում էին միմեանց, Փետրուարից մինչեւ գրեթէ Ապրիլի վերջը մամուլը, գրական-հասարակական հանդէսները հեղեղումներ էին Թումանեանի յոբելեանին նուիրուած միջոցառումների, ցերեկոյթների ու երեկոյթների նիւթերով, շնորհատրական հեռագրերով ու նամակներով, մեծ կամ փոքր ծաւալի բազմաթիւ նիւթերով, որոնք յագեցած էին մեծարման շնչով ու տրամադրութեամբ:

Հայ գրականագիտութեան մէջ Թումանեանին նուիրուել են բազմաթիւ արժէքատու ուսումնասիրություններ, յօդուածներ, սակայն 100ամեայ հե-

ռատրոֆինից անելորդ չէ մէկ անգամ եւ անդրադառնալ նրա 50ամեայ յոբելեանին, մասնատրապէս նրա ստեղծագործութեան ու մարդկային նկարագիրը նորովի ու իւրովի ներկայացնող հրապարակումներին: Յօդուածների քանակը եւ ծաւալը սահմանափակում են դրանց առանձին-առանձին եւ հանգամանօրէն անդրադառնալու հնարատրոֆինը մէկ յօդուածի սահմաններում: Ուստի փորձել ենք առանձնացնել յոբելեանական բազմաթիւ յօդոյների հիմնական դրոյթները, որոնք բնութագրում են յոբելեարին՝ իբրեւ բանաստեղծի, մարդու, հասարակական գործչի եզակիութիւնն ու անկրկնելիութիւնը:

Յոբելեանական հրապարակումները, տարաբնոյթ լինելով հանդերձ, ունեն ընդհանրութիւններ: Ա.՝ դրանց հիմնական մասը գրուած է մարդկային ջերմ սիրով, անկեղծ պոռթկումներով ու խոստովանութիւններով, գնահատման անխախտ համոզմունքով, ժամանակի փորձութիւնն անցած տեսակէտներով: Բ.՝ ունեն բովանդակային նուրբ աղերսներ, որոնք թոյլ են տալիս դրանք բաժանել երեք խմբի՝ ա) գնահատանքի ու մեծարման արտայայտութիւններ, բ) թումանեանի բանաստեղծական աշխարհի վերլուծութեան, քննութեան նոր փորձեր, գ) չափածոյ ձօներգեր եւ ուղերձներ:

Յոբելեանի առիթով թումանեանին բանաստեղծութիւններ են նուիրում Ալեքսանդր Կոլեբեակինը⁶, Արմէնուհի Տիգրանեանը⁷, Ազատ Վշտունի⁸, Պահարէն⁹, Սահկիւեանը¹⁰, Արսէն Դլտճեանը¹¹, Վասիլի Զոտան¹², Լ. Ազնաւարեանը¹³, Յարութիւն Թումանեանը¹⁴ եւ ուրիշներ:

Գրապատմական առումով առաւել կարեւորում են մամուլի հրապարակումները: Գնահատանքի ու մեծարման շեշտադրումով աչքի են ընկնում *Մշակ*, *Ժողովրդի Ձայն*, *Աշխարատոր*, *Յառաջ* եւ այլ պարբերականներում տպագրուած յօդուածները: Հեղինակներից իւրաքանչիւրը (Դամիթ Անանուն, Ստեփան Զօրեան, Յարութիւն Սուրխաթեան, Մաթեոս Դարբինեան, Ալեքսանդր Պապովեան, Գարեգին Լեւոնեան, Սմբատ Տէր Աւետիսեան, Սալ-Ման, Սերգէյ Գորոդեցկի, Աւետիս Ահարոնեան, Վահան Խորէնի են.) իր նկատած նրբերանգով ամբողջացնում է բանաստեղծի դիմապատկերը: Մեծագոյն ակնածանքով ու սիրով է շնչում «Ժողովրդի Երգչի Տօնը» անստորագիր գրութիւնը՝ տպագրուած 1919ի *Յառաջի*¹⁵ հմր. 32ում: Թում է՝ հեղինակը յատուկ խորհրդով է անստորագիր թողել իր գրութիւնը՝ յուշելու համար, թէ դա ամբողջութեամբ հայ ժողովրդի հաւաքական սիրոյ եւ մեծարման խոստովանութիւնն է. չէ՞ որ բոլորը՝ ծեր ու մանուկ, տղայ ու աղջիկ, գիւղացի ու քաղաքացի, սնուել ու մեծացել, վայելել ու հարստացել են Թումանեանի հոգեւոր գանձերով: Նրա ստեղծագործութիւնը, ինչպէս հաւաստում է գրութեան հեղինակը, հայ ժողովրդի «*ոգու սքանչելի ու խորհրդատու մայրեանն է, որ դեռ երկար ժամանակ հոգեկան սնունդի, գերագոյն վայելքի ու դաստիարակութեան վսեմ աղբիւր պէտք է լինի*»: Ակնյայտ է Թումանեան-հայ ժողովուրդ անտրոհելի միասնութիւնը: Բանաստեղծը հանճարեղ խորաթափանցութեամբ է զգացել, վերապրել ու

կենդանագրել հարազատ ժողովրդի ապրումներն ու խոհերը, յոյզերն ու ծգտումները, տառապանքը: Իրապէս, «Յ. Թումանեանը, իր ժողովրդի մարքի, խօսքի ու բանաստեղծական ձեւի մեծ վարպետը մի ինքնարժէք մեծութիւն, մի բնական, անգնահատելի գանձ է մեր գրականութեան համար... Նրա ստեղծագործութիւնը ամենափայլուն օրինակն ու ապացոյցն է մեր ժողովրդի ստեղծագործական մեծ ու անսպառ կարողութեան»: Այս մտքերը ուղղակի հաստատում են, որ ժողովրդի բանաստեղծը անմահանում է իր ժողովրդի հետ:

Ասուածը հաւաստելու է գալիս «Նոր Սերնդի Բարեկամը» գրութեան հեղինակ Վաղարշակ Նորենցը («Նորերից» ստորագրութեամբ), որ Թումանեանի հանդէպ համաժողովրդական սիրոյ գաղտնիքը այսպէս է մեկնում. «Գոռոզ չէ նա՛ ի դէմս իր համբաւի, գգուող ու գուրգուրող, միշտ ժպտերես, խրախուսական, մեծ է իր անժխտելի փաղանդի մէջ, իր անուշով, դիրքով, բայց հասարակ է մարդկային առօրեայով, սովորական՝ որքան մի ընկեր... Եւ սրանք են այն արժանիքները, որ սալոնից դուրս մարչելի են ոչ միայն մտաւորականին կամ ինտելիգենտին, այլեւ գիտացուն, աշակերտին ու նամանաւանդ երեխաներին»¹⁶:

Գրութեան հեղինակն ընդգծում է բանաստեղծի առաքելութիւններից եւս մէկը՝ մատաղ սերնդի «հոգեկան բարձրացմանը», գեղագիտական դաստիարակութեանը ուղղուած անմնացորդ նուիրումն ու ծաւալած գործունէութիւնը¹⁷. «Փոքրիկ մանուկն առաջին անգամ էսթետիկապէս սնում է Թումանեանով եւ նրանով էլ մեծանում. եթէ մէկը բախտ է ունեցել մօտիկից ծանօթանալու նրա անձի հետ, նա անշուշտ, գիտակցում է այն համաճափութիւնը, որ կայ այդ մեծ բանաստեղծի անձնատրութեան ու ստեղծագործութեան պարզութեան մէջ: Նրա կէտդարեայ գոյութիւնը եւ երեսնամեայ գրական գործունէութիւնը պարուսպորում է նոր սերնդի աճման ու հոգեկան բարձրացման»¹⁸:

Այս տեսակէտը նորութիւն չէր, վաղուց հաստատուած իրողութիւն էր հայ իրականութեան մէջ: Թումանեանի մանկական ստեղծագործութիւնները մասնակի բացառութիւններով բարձր են գնահատուել ժամանակի քննադատութեան կողմից: Բազմաթիւ գրախօսութիւններ, յօդաձեւեր մասնակիօրէն կամ ժամանակի ընդհանուր համապատկերում պարզաբանել են Թումանեանի մանկագրութեանը բնորոշ առանձնայատկութիւնները, նախանշել դրանց անփոխարինելի դերը երեխաների դաստիարակութեան եւ արժէհամակարգի ձեւաւորման գործում:

*Լեւոնեանը՝ «Բանաստեղծը» փոքրիկ յօդաձեւում մարգարէական կանխագուշակութեամբ ընդգծում է բանաստեղծի բացառիկութիւնը, որ հարկաւորաբար հեռաւորութիւնից կարող է արձանագրուել իբրեւ հաւաստի իրողութիւն. «Անձեռագործ արձան է կանգնեցնում իր համար հանճարեղ բանաստեղծը եւ ոչ մի քար, ոչ մի հարուած, մրրիկ կամ յորձանք չեն կարող հասնել, չեն կարող վնասել այդ հոյակապ կոթողին, մարքի գեղեցկի եւ

վսեմի հոյակապ շէնքին»¹⁹: Յօդուածն յատկապէս ընդգծում է, որ Թումանեանն իր հոգու եւ մտքի թոփշքները, տաղանդը մշտապէս նուիրաբերել է հայրենիքին:

Արծալ բանաստեղծութիւն է յիշեցնում *Ժողովրդի Ձայնի* նոյն համարում (39) տպագրուած «Մեր Յովհաննէս Թումանեանին» նիւթը, որի հեղինակը՝ «Հայեազն» ստորագրութեամբ, մեծարում է բանաստեղծին՝ կիրառելով փոխաբերութիւնների, մակդիրների ու համեմատութիւնների շքեղ համալիր: «Փառք քեզ» սկսուածքով միջանի պարբերութիւններում դասական ներբողների ոճով ընդգծում է բանաստեղծ-մարդ-հասարակական գործիչ Թումանեանի մեծութիւնը:

Նոր Նախիջեանի *Հայ Համայնք* հանդէսի հմ. 16ում տպագրում է Երուանդ Շահագիզի «Յովհաննէս Թումանեան» յօդուածը²⁰: Թումանեանին դասում է հներից յետոյ եկող այն նորերի շարքին, որոնց ստեղծագործութեան մէջ «երեւում է հայ ժողովրդի դէմքը իւր լիակալար իրական պատկերով, իւր մտածելակերպով, աշխարհահայեացքով, խոհերով ու տեսչերով»²¹: Յատուկ ընդգծում է գրական միջավայրում եւ հասարակական գիտակցութեան մէջ այդ նոր «կաճառի» տեղը հաստատելու համար Թումանեանի հսկայական ջանքերը: Արծանագրում է այն բացառիկ փաստը, որ բանաստեղծի առաջին գրական փորձերի գնահատողը եղել է ոչ թէ պաշտօնական քննադատութիւնը, «այլ ինքը հայ ժողովուրդը, որ մի կողմ թողնելով պաշտօնական քննադատութիւնը եւ նրա կատարելիք վաւերացումը ու սրբագործումը, ինքը իւր բնագրով, իւր հոգով ճանաչում է ու գնահատում բանաստեղծին՝ վարակելով, բաշելով ու տանելով իւր յետեւից եւ քննադատութիւնը»²²: Այս բնութագիրը անելի քան խօսում է. քննադատական ամենատարբեր ուղղութիւնների եւ մեթոդների բովով անցած բանաստեղծի գրական ուղին իրականում հարթ չի եղել. յաճախ է Թումանեանը ստիպուած եղել պայքարելով կամ գիտակցուած լուրջեամբ յաղթահարել իր բնականոն գրական յառաջընթացը խոչընդոտող շատ արգելքներ՝ մշտապէս պահելով իր դիմագիծն ու մարդկային տեսակը: Սակայն հայ ժողովուրդը ներքին մի մտահայեցութեամբ եւ ներըմբռնումով կարողացել է ճանաչել ճշմարիտ բանաստեղծին, որի ստեղծագործութիւնների իրաքանչիւր տողը հայ մարդու հոգու ճիչն է, սրտի զարկը, թաքուն վիշտը, դառը ժպիտը, նաեւ կենսունակութեան վառ արտայայտութիւնը:

Թումանեանի ստեղծագործութեան կարեւոր եւ անբաժանելի մասը Շահագիզը համարում է նրա յօդուածները: Այդ տեսակին բանաստեղծը դիմում է այն ժամանակ, բացատրում է յօդուածագիրը, երբ որեւէ հրատապ խնդիր է դրում հրապարակի վրայ: Հետաքրքիր դիտարկումներ է անում նաեւ նրա մարդկային տեսակի մասին. «Նա մի անուշ խօսող, պարմող, ծիծաղող ու ծիծաղեցնող, կենսուրախ ու սրամիտ մարդ է, ամէնքի հետ շուր մտերմացող, ամէնքի սիրտը իւր հետ կապող,

նա բանաստեղծ է ոչ թե միայն այն ժամանակ, երբ ստեղծագործում է, այլ բանաստեղծ է եւ իր առօրեայ կեանքում. նրա խօսուածքը, զրոյցը, կարակը, սրաբանութիւնները բոլորն էլ բանաստեղծութիւն են, որ նա անգիրակցաբար անվերջ ու անհատում շոյալլում է ամէն րոպէ...»²³:

Այսպիսով՝ յիշեալ յօդուածները հաստատում են, որ 50ամեայ յրելեարը արդէն վաստակել էր ժողովրդի ամենասիրելի ու հարազատ բանաստեղծը լինելու պատիւը:

Յոյգերով գեղումնառատ այս գրութիւնների կողքին, անշուշտ, առաւել կարեւորում են այն հրապարակումները, որոնցում փորձեր են արւում վերլուծելու եւ արժեւորելու բանաստեղծի երեսնամեայ գեղարուեստական վաստակը: Վերլուծութեան մեթոդաբանութեան տեսակէտից յօդուածները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում Թումանեանի երկերը մեկնաբանում ու արժեւորում են դասական գեղագիտութեան, երկրորդում՝ հասարակական-քաղաքական կացութեան չափանիշներով: Նկատի ունենալով յօդուածի սահմանափակ ծաւալը՝ առաջին եւ երկրորդ խմբից առանձնացրել ենք միայն մեր կարծիքով ամենաբնորոշները:

Զօրեանը իր յօդուածը սկսում է հռետորական հարցադրումով «Ո՛վ է Յովի. Թումանեանը»: Հարցը պատահական չէ. ժամանակի մամուլը, մտաւորականներից շատերը, ինչ-որ անհասկանալի օտարամոլութեամբ, խուսափում են սեփական ազգի քանքարատրոներին գնահատելուց: Զօրեանը միանգամայն վստահ յայտարարում է. «... Թումանեանը մեզ ներկայանում է իբրեւ համազգային բանաստեղծ: ... Թումանեանը հայ գրականութեան համար նոյնն է, ինչ որ Պուշկինը ռուս գրականութեան համար»²⁴:

Յօդուածագիրը հետաքրքիր եւ տիպիկ աղերսներով զուգադրում է երկու մեծութիւններին: Երկուսին միատրողը անմնացորդ սէրն է դէպի հարազատ ժողովուրդը: Երկուսն էլ «յայտնաբերում են ցեղային նկարագիրը, ոգին, աշխարհահայեացքը, ինչ որ նրանց դարձնում է իւրայինների համար սիրելի ու հարազատ, օգարների համար՝ նորագիւտ ու գրաւիչ, իսկ նրանց գործերը՝ համազգային, հեղեղաբար եւ համամարդկային»²⁵: Զօրեանը եւս ընդգծում է Թումանեանի ստեղծագործութեան ամենակարեւոր յատկանիշը՝ ժողովրդայնութիւնը, որ միատրում է Թումանեանին եւ Պուշկինին: Հայ բանաստեղծների մէջ դժուար է գտնել մէկին, որ իր երկերով այնքան հարազատ լինի ժողովրդին, որքան Թումանեանը. «Անգրագէտ գիտացուց սկսած մինչեւ նրբաճաշակ մրաւորականը հաւասարապէս հասկանում են Թումանեանին եւ զմայլում նրանով: Սա մի բացառիկ երեւոյթ է, որ ինքնին ապացուցում է բանաստեղծի մեծութիւնը, մի երեւոյթ, որ ցոյց է տալիս, թէ բանաստեղծն իր ժողովրդի մօից ու արիւնից է, այնքան հարազատ, որ եթէ մի օր աշխարհի բոլոր առանձին ժողովուրդների բանաստեղծութեան ցուցահանդէս լինի, հայ ժողովուրդը ուրիշ ոչ ոքի չի կարող ուղարկել, բացի Թումանեանից, իբր իւրօրինակ զգարիւն հայ բանաստեղծի, այնպէս, ինչպէս Ռուսաստանը ներկայացնողը կարող է լինել

միմիայն Պուշկինը»²⁶։ Զօրեանը իր ասելիքն ամփոփում է սեղմ բանաձեւումով. «Թումանեանը համազգային բանաստեղծ է։ Թումանեանը հայոց Պուշկինն է»²⁷։ Արժէ յիշեցնել, որ ինքը՝ Թումանեանը՝ յայտնի դրամբեանիգմի դէմ գրած յօդուածներից մէկում որոշակի ընդհանրութիւն էր տեսնում իր եւ ռուս բանաստեղծի գրական ճակատագրերի միջեւ²⁸։

Աւելի վաղ՝ 1914ին, Թումանեան-Պուշկին զուգահեռին անդրադարձել էր նաեւ Վահան Տէրեանը «Հայ Գրականութեան Գալիք Օրը» գելուցման մէջ. «Այսօր Թումանեանը իր լեզուն հասցրել է այն բիւրեղանման պարզութեան, որը մօրեցնում է նրան ուղիղ Պուշկինին»²⁹, եւ որը նրա գերագոյն արժանիքներից մէկը պիտի համարուի»³⁰։

Գրականագիտական տեսանկիւնից որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում նաեւ Պապովեանի «Յաւերժի Տեսչը» յօդուածը։ Հեղինակը Թումանեանի ստեղծագործութեան մէջ կեանքի ու մահուան, մասնատրի եւ հանուրի, չարի եւ բարու, անհունի ու յաւերժի, տիեզերական ներդաշնակութեան եւ այլ հարցերի մասին փիլիսոփայական երկար խորհրդածութիւններից յետոյ ընդգծում է ասելիքի հիմնահանգոյցը. այդ մտորումները բանաստեղծին չեն մղում «յարաբոն հաշտութեան, անվրդով սիրոյ եւ խաղաղ լաւարեսութեան» երանաւտ եզերքը, «մանաւանդ որ նրա պանթէիզմն էլ ոչ բուրդայական նիրանա է, որ հրաժարում է այն ամէնից, ինչ մարդկային է, եւ ոչ էլ Սպինոզայի «միահանուրը» ..., որ, ըստ Շոպենհաուերի, մի «քաղաքավարի աթէիզմ» է»³¹։ Նրա սէրը անհուն է, նովորումը՝ անսահման, սակայն նոյնքան մեծ է «դարդը», որ կարող է խոստովանել միայն Աստծուն։ «Հայաստանի բացառիկ կեանքը թեահարում է պոէտի անհունի ճախրանքը... եւ նա, շփոթում յաւերժի շէմքին, բերում է Աստծուն իր վիշտը՝ հայի վիշտը, որի խաւար ծովի մէջ լող է քայլիս պոէտի քառապագին անհունութիւն որոնող ոգին»³²։ Պապովեանի դիտարկումների մէջ կենտրոնականն ու հեռանկարայինն այն է, որ նա բանաստեղծի փիլիսոփայական խոհերը չի կտրում իրական հողից, զգում է, որ դրանց հիմքը մարդկային կեանքի անկատարութեան գիտակցումն է, մասնատրապէս հայ ժողովրդի օրհասական վիճակը։ Յօդուածի աւարտին, բերելով «Հայրենիքիս Հետ» բանաստեղծութեան վերջին տունը, եզրակացնում է. «Մեր հայրենիքի հետ կապուած յոյսերի իրագործումը լոյսի յաղթանակ է. նրա ազաւարգրումը խաղաղութեան, եղբայրութեան եւ համամարդկային սիրոյ նուաճումն է... Պոէտ, շարունակի՛ր անդադրում քննանքներդ. յոյսի, լոյսի հայրենիքդ պիտի փրկուի, դու պիտի նուաճես յաւերժին»³³։

«Յովհաննէս Թումանեան» վերնագրով ստուարածաւալ ուումնասիրութիւն է տպագրում Պիատիգորսկի Ալիք հանդէսում, որի հեղինակ Եփրեմ Տէր Մարտիրոսեանը փորձում է տալ բանաստեղծի ստեղծագործութեան ամփոփ բնութագիրը, որտեղ կան դիտարկումներ, որոնք որոշակի հետաքրքրութիւն են ներկայացնում։

Այսպես՝ Տէր Մարտիրոսեանն ընդգծում է բանաստեղծի դիցազներգական մտածողութիւնը, ուստի թեթեւօրէն անցնելով նրա քնարերգութեան վրայից՝ հանգամանօրէն անդրադառնում է պոէմներին, որովհետեւ, ինչպէս բացատրում է նա, «*Թումանեանը, բառիս ընդարձակ իմաստով, հիմնադիրն է ազգային պոէմի, որի բովանդակութիւնը ժողովրդի կեանքն է*»³⁴։ Ուշադրութեան արժանի մեկնաբանութիւններ կան առանձին պոէմների վերաբերեալ։ Օրինակ՝ «Մարօ» եւ «Անուշ» պոէմներում յօդուածագիրը յատուկ ընդգծում է հայ կնոջ իրաւագուրկ, ողբերգական կացութիւնը։ Բոլոր հերոսներն էլ ակամայ դառնում են «աղաթի», ժամանակի ընթացքում սրբագործուած սովորութիւնների գերին եւ զոհը։ «*Լոռեցի Սաքօն*» պոէմում մատաղ սերնդի դաստիարակութեան հիմունքներն են հանդէս բերում»³⁵, - համոզուած նկատում է Տէր Մարտիրոսեանը։ Եթէ նկատի ունենանք, թէ ժամանակին որքան բանավէճեր են ծաւալուել Սաքոյի խելագարութեան հոգեբանական հիմնատրուածութեան շուրջ, ապա այս բնութագիրը կարելի է համարել պոէմի հեղինակային մտայղացման նոր մեկնաբանութիւն։ «Սասունցի Դաւիթ» պոէմն արժեւորում է բանահիւսական նիւթի մշակման թումանեանական մեթոդի տեսանկիւնից։ Փոքրածաւալ անդրադարձի եզրակացութիւնն այն է, որ բնօրինակի գեղարուեստական մշակումներից ամենայաջողուածը Թումանեանինն է, «*որը առհասարակ գիտէ վարպետօրէն օգտուել ժողովրդական բանահիւսութեան գոհարներից՝ միաժամանակ հաւատարիմ մնալով նրա արտայայտութեան հիմնական պահանջներին*»³⁶։ Այսպիսի գնահատումները յատկապէս կարելի էր անել, եթէ նկատի ենք ունենում յայտնի դրամբեանիզմի պարբերական յարձակումները, նաեւ որոշ քննադատների՝ պոէմի հեղինակային մշակման վերաբերեալ բացասական կարծիքները։

Տէր Մարտիրոսեանը անդրադառնում է նաեւ բանաստեղծի հայրենասիրական երգերին, որոնք, ինչպէս եզրակացնում է նա, խոր մարդասիրութեան արմատներ ունեն եւ զերծ են մարդատեացութիւնից։

Տէր Մարտիրոսեանը բաւական հանգամանօրէն անդրադառնում է եւ Թումանեանի մանկական ստեղծագործութիւններին։ Ըստ յօդուածագրի՝ Թումանեանն ունի մանկան ներաշխարհը թափանցելու, նրա հոգեբանութիւնն ըմբռնելու, նրա սրտի հետ խօսելու բացառիկ կարողութիւն։ Դա է պատճառը, որ դպրոցներում պահանջուած են Թումանեանի ստեղծագործութիւնները, յատկապէս պատկերազարդ գրքոյկները։ Հեղինակն անդրադառնում է դրանցից երկուսին. «Մի Կաթիլ Մեղր»-ում ցոյց տալով կեանքի ու՜ մարդկային յարաբերութիւնների դատարկ ու ողորմելի պատկերը՝ Թումանեանը երեխաներին օրինակ է բերում «Հսկայի» չքնաղ գրոյցը, որ սովորեցնում է գնահատել իրական արժէքները եւ հասկանալ, որ մարդու մեծութիւնը պայմանաւորում է մարդասիրութեամբ եւ մեծահոգութեամբ։

Տէր Մարտիրոսեանի ուսումնասիրութեան մէջ նշանակալից է նաեւ Թումանեանի պոէմների լեզուին տուած գնահատականը. «*Նրա լեզուն*

ճկուն է, հարուստ, ճոխ եւ մաքուր: Տարիների ընթացքում նա յամառ աշխատանք է թափել իր արտայայտութեան արտաքին ձեւերի վրայ եւ յաջողել է կատարելութեան հասնել... Մեր գրականութեան մէջ ստեղծուել է մի դպրոց, որ յիրաւի Թումանեան կարելի է անուանել: Վ. Միրաքեանը իր «Լավվարի որսով», Գ. Մեսեանը իր «Չարի» պոէմով, մանկական ամսագիր «Հասկերի» շուրջ խմբուած Աթ. Իսնկոյեան, Յ. Աղաբաբ եւ այլ սկսնակ ուժեր յիշեալ դպրոցի աշակերտներ կարող են համարուել թէ՛ իրենց դիպաշարերով եւ թէ՛ արտայայտութեան ձեւերով»³⁷:

Ծաւալուն յօդուածի վերջում հեղինակը եզրակացնում է. «Սերունդներ կը գան ու սերունդներ կ'երթան, կեանքի առօրեայ մանր-մունր հոգսերին արծազանգող շապ հրապարակախօս գրողներ մոռացութեան կը տրուին: Իսկ Թումանեանը՝ որպէս մաքուր արուեստի հաւատարիմ ու փառանդատ արտայայտիչ, յաւերժօրէն կ'ապրի հայ գրականութեան մէջ»³⁸:

Յօդուածնական յօդուածների երկրորդ խումբը անլի հարուստ է այնպիսի հարցադրումներով, որոնք բանավեճերի առիթ են տուել ինչպէս իր ժամանակին, այնպէս էլ յետագայում՝ մինչեւ մեր օրերը:

Այսպէս՝ «Յարգանքի Խօսք Յովհ. Թումանեանին» յօդուածում Անանունը «Պառնասի գարդ» է անուանում բանաստեղծին՝ նրա կարեւորագոյն ստեղծագործական նուաճումը համարելով հայի կերպարի կերտումը, այն հայի, որն էութեամբ ու հոգեկան աշխարհով հարազատ է ամէնքին: «Թումանեանը,- պարզաբանում է իր միտքը քննադատը,- գերազանցապէս ժողովրդական բանաստեղծ է, ժողովրդի խորքից ելած եւ իբրեւ զանգուածային ընդերքի պրոտը՝ նա խօսքի գոհար է»³⁹: Ոչ վաղ անցեալում (1912) Անանունը Թումանեանին նուիրում «Անցեալի Մեծարանքը» յօդուածում⁴⁰ զարգացնում էր այն հիմնական միտքը, թէ Թումանեանը «հայկական առանձնայատկութեան բանաստեղծ» է, որ մեծարել է «ժողովրդի այսպէս ասած քահել հասակը»՝ նահապետական գիտը: Յօդուածի շուրջ ծաւալուած բանավեճի ընթացքում Անանունը շարունակ պնդում էր իր այն տեսակէտը, թէ՛ «Մենք Թումանեանին նրա հերոսների համար չենք դադարաւորել, այլ ասել ենք, որ նա մեծարում է անցեալը. մի բան, որ իրողութիւն է: Չէ՞ որ նկարագրած կեանքն այսօր անհետանում է: Թումանեանը սիրում է իր երգած աշխարհը: Եթէ այնպեղ նրա հասկացողութեամբ անիրաւութիւններ կան, ապա դրա համար վշտանում է»⁴¹: Անանունին հետաքրքրող ոչ այնքան Թումանեանի ստեղծագործութեան գեղարուեստական արժէքն էր, որի վերաբերմամբ նա որեւէ վերապահութիւն չունէր, որքան այդ առիթով գրական քննադատութեան մէջ մարքսիստական պատմաընկերաբանական մեթոդի հաստատման ծգումը:

Նկատելի է՝ բանավեճը ծաւալում էր տարբեր աշխարհայեացքների, գեղագիտական սկզբունքների բախման շուրջ՝ ըստ էութեան շրջանցելով Թումանեանի ստեղծագործութեան իրական արժէքի խնդիրը: Բանավեճին հենց այս կողմից խառնում է Յակոբ Օշականը՝ անդրադառնալով Ա-

նանունի յօդուածին: Օշականն անհասականալի է համարում Թումանեանի ստեղծագործութեան՝ Անանունի վերլուծութեան մեթոդը. «Թերեւս ուսահայերը հանդուրժեն գրական այս վարկապարագի շեղումը, ես չեմ կրնար սակայն բացապրել դիցազներգութիւնն ու ընկերաբանութիւնը իրար ծուլելու այս անիմաստ եռանդը»⁴²:

Գրախօսը հենց սկզբից, որպէս վերլուծութեան կանխադրոյթ, անվերապահ հաւաստում է, որ Թումանեանը մեր ամենամեծ բանաստեղծն է «դիցազներգութեան սեռին մէջ». «Յովհաննէս Թումանեան կը պարկայնի այն հազուագիւր մարդերու խումբին, որոնք ժողովուրդներու պարմութեան այս ու այն կէտերուն վրայ կը բուսնին յանկարծ, առանց իրենք զիրենք անգարարանելու: Իրենց երեսումը ճակարագրական բան մը ունի իր մէջ... Ամէն ազգ իրը ունի: Ու անոնք սերունդներուն շիրիմներուն վրայ իրենց փառքը կ'արծանացնեն ու անոնք միջակութիւններուն, հասարակութիւններուն ծանծրոյթը կը վռնարեն պարմութենէն»⁴³:

Այս խոր գիտակցութեամբ էլ քննադատն իր խօսքն ուղղում է Անանունին. «Երբե՛ք, պ. Դ. Անանու՛ն, այդ սքանչելի բանաստեղծը վերլուծելու համար տեղ չունին ձեր այնքան ճարտարօրէն տեղատրած պարկերացումները «Գիւղի կեանքից»»⁴⁴: Զուգահեռներ տանելով Լաֆոնթէի հետ՝ Օշականը մօտենում է թումանեանական հերոսների գեղարուեստական կենսագործունէութեան իրական ակունքներին: Նրա հերոսները չեն մնում գիւղի նեղ սահմաններում. «Անոնք խորքին մէջ յալիտենական հոգիներ են, ցեղին քմայքն ու երեսակայութիւնը կը խորանայ անոնց մէջ»⁴⁵:

Տարիներ անց յրեւելեանական յօդուածում Անանունը կարծես երկրորդ տեղում է թողնում գնահատման նախկին ելակէտը եւ առաւելապէս ընդգծում բանաստեղծի ժողովրդայնութիւնը, որ յետագայում պիտի դառնար գեղարուեստի արժէքայնութեան չափանիշներից մէկը:

Սուրխաթեանը «Յովհաննէս Թումանեանի Տեղը Մեր Գրականութեան մէջ» յօդուածում վիճարկում է Տէրեանի՝ դեռեւս 1914ին արտայայտած «ունիկումի»⁴⁶ տեսակէտը՝ նկատելով, որ «բանաստեղծը իր լրիւ կերպարանքով կանգնած է հայ նորագոյն գրականութեան զարգացման գլխատր ճանապարհի վրայ, գրնում է նրա գլխատր հունի գլխին»⁴⁷: Սուրխաթեան, իհարկէ, ճիշտ չի մեկնաբանել Տէրեանի «ունիկումի տեսութիւնը», որ ամենեւեւ էլ չէր նշանակում, թէ Թումանեանը առհասարակ մեկուսացուած է գրականութեան զարգացման միասնական ընթացքից. նա ինքն էր երեք տարի առաջ, արդէն ճշգրտել իր տեղը նոր շրջանի հայոց բանաստեղծութեան զարգացման հետեւողական շղթայում⁴⁸: Տէրեանի բնորոշումը նշանակում էր միայն, որ Թումանեանով ամարտում է արեւելահայոց բանաստեղծութեան մի ամբողջական շրջափուլ, որ դասական ամբողջականութեան է հասնում նրա ստեղծագործութեան լաւագոյն էջերում: Այս իմաստով էլ նա մնում է եզակի եւ անկրկնելի, այսինքն՝ «ունիկում»⁴⁹: Գրականագիտութեան մէջ դա արդէն վաւերացուած իրողութիւն է, ինչպէս գրում

է ճանաչուած թումանեանագէտը. «Ապագայի կուլտուրայի մէջ Թումանեանի ստեղծագործութիւնը թէւ կը պահպանի իր հմայքը իբրեւ ժողովրդական ոգու եւ իր ժամանակի անկրկնելի յուշարձան, բայց գալիքի հայ պոեզիան այլեւս նրա սկզբունքներով զարգանալ չի կարող: Ազգային մեծ բանաստեղծը միակն է եւ անկրկնելին: Նա պատկանում է բոլորին, բայց չի կարող ուղղակի նմանութեան աղբիւր լինել: Այսպէս էր մտածում Վահան Տէրեանը, երբ խօսում էր Թումանեանի եզակիութեան մասին»⁵⁰:

Յոբելեանական յօդուածում եւս Սուրխաթեանը, ինչպէս իր մարքսիստ գաղափարակից Անանունը, զարգացնում է այն միտքը, թէ Թումանեանը «մնացել է հաւատարիմ իր իդէալականացրած, իր սիրած աշխարհում, աւելի եւս ուժգին համակուելով հայրենի երկրի կարօտով»⁵¹:

Այս տեսակէտը նորութիւն չէր Սուրխաթեանի քննադատական ելոյթներում եւ ունէր իր որոշակի աշխարհայեացքային հիմքը, որ ձեւաւորուել էր արուեստի ընկերային համարժէքի վերաբերեալ մարքսիստական ուսմունքի շրջանակներում: Նա շատ լաւ տեսնում եւ ընդունում էր թումանեանական արուեստի մեծութիւնն ու անկրկնելիութիւնը, որ երեսում է բաական դիպուկ այն բնորոշումից, թէ «Թումանեանի դէմքը, որպէս բանաստեղծի, գեղարուեստական գրողի, լրիւ է: Նա, այսպէս ասած, արդէն հայկական Պառնասումն է»⁵²: Բայց երբ փորձում է իմաստաւորել եւ արժեւորել նրա ստեղծագործութիւնն ըստ էութեան եւ ամբողջութեան մէջ, բացում է նրա մօտեցման երկրորդ երեսը: «Բայց մենք ունենք սպասելիքներ, թէ՛ ոչ», հարց է դնում նա եւ պատասխանում: «Այո՛, ունենք, բայց ոչ այնպիսի բաներ, որոնք նորութիւն լինէին բանաստեղծի համար: Նա ունի երկու պարզատրութիւն: Առաջին՝ շարունակել պրպարումներն ու գիւտերը ժողովրդական հոգեկան գաղտնարանն եւ ամփոփել նրանց գեղեցիկ ձեւերի մէջ: Երկրորդ՝ աւարտել հայդուկային շարժման պատկերացումը՝ տալով մեր կեանքի մի մեծ շրջանը կազմող այդ շարժման անձնագրի դոնկիխոտութեան նկարագիրը՝ բառիս ընդարձակ եւ լրջամիտ իմաստով»⁵³:

Երկու խնդիրներն էլ, որ դնում էր քննադատը բանաստեղծի առջեւ, նաեւ Թումանեանի նուիրական բաղձանքն էր՝ աւարտին հասցնել «Հագարան Բլբուլ» եւ «Հին Կոիւլ» պոէմները: Բայց ահա երկրորդի դէպքում մարքսիստ քննադատի «սպասելիքը» բոլորովին տարբեր էր բանաստեղծի մտայղացումից. նա հայդուկային շարժումը գեղարուեստի լեզուով պիտի յաւերժացնէր ոչ իբրեւ «դոնկիխոտութիւն», այլ որպէս հայրենիքի փրկութեան սրբազան կոիւ:

Այնուամենայնիւ, անկախ իր որդեգրած գաղափարական կաղապարներից, մարքսիստ քննադատը տեղի է տալիս բանաստեղծի իրական մեծութեան առջեւ՝ այդ մեծութիւնը տեսնելով ու գնահատելով յատկապէս պոէմների, առասպելների ու հեքիաթների մէջ, որտեղ, ինչպէս համոզուած է քննադատը. «հրապուրիչ պարզութեամբ մերկանում է հայ ժողովր-

դի հոգեկան աշխարհն ու կենսափիլիսոփայությունը՝ միաժամանակ բացայայտելով բանաստեղծի փառանդի ուժն ու թափը: Սուրբաթեանը բարձր է գնահատում Թումանեանի ստեղծագործության թեմատիկ-գաղափարական հարստությունը, որ անչափ կարետոր է համարում մանուկ սերնդի դաստիարակման գործում:

«Մայիսի Մէկը եւ Յովհաննէս Թումանեանը» յօդուածում Ս. ստորագրութեամբ հեղինակը, որ հաւանաբար հանդէսի խմբագիր Սուրէն Երզնկեանն է, նոր ճեատորուող պրոլետարական գաղափարախօսութեան դիտակէտից իրօրինակ մեկնաբանութիւն է տալիս Թումանեանի ողջ ստեղծագործութեանը. «*Յովհաննէս Թումանեանը բանուորութեան երգիչը չէ: Նա չի երգել կողկերպի աշխատանքի քաղցրութիւնը, բանուորի սպեղծագործող բազուկը, մեքենայի յուզիչ աղմուկը... բայց նա չի թունաւորել նոյնպէս մեր սրտերը «ազգասիրական» մոտիւններով, մարդապետաց թոյնով: Թումանեանը... երգել է անհափի ազատութիւնը, կոռու է - պրոլետարին յարուկ յամառութեամբ եւ շիտակութեամբ - Անդրկովկասի համերաշխութեան, վրացո-հայի-թուրքի եղբայրութեան համար, որի կարելիութեան նա միշտ էլ խորապէս հաւատացել է: Բանուոր դասակարգը չի՝ մոռանայ երբեք ազատ սարերի ու ձորերի փառանդաւոր երգչին, եղբայրութեան վեհ գաղափարի այդ համոզուած ու ազնիւ մարտիկին»⁵⁴: Այս մեկնաբանութիւնը լաւագոյն օրինակ կարող է լինել, թէ ինչպէս քննադատող գեղարուեստական ստեղծագործութեան իրական արժէքը պայմանաւորող գաղափարներն ու մտքերը կարող է յարմարեցնել ժամանակի պահանջներին կամ սեփական կանխադրոյթին՝ մեծ գեղագէտի հաւատարմութիւնը իր բարձր իդէալներին ներկայացնելով այնպէս, թէ նա «կոռու է պրոլետարին յատուկ յամառութեամբ ու շիտակութեամբ»:*

Թումանեանի յրեւելեանական յօդուածների մէջ խորութեամբ ու ծաւալով առանձնանում է Վ. Խորէնիի «Գիտական Աշխարհի Երգիչը» յօդուածը: Ուշագրաւ է, որ հեղինակը, քննադատական միակողմանիութիւնից խուսափելու համար, փորձում է կիրառել համադրական մեթոդը: «Գրական երկերի քննադատութիւնը օրելկրի ու գիտական լինելու համար, յօդուածի սկզբում գրում է նա,- պէտք է ոչ միայն ենթակայիկ (սուբեկտիւ) կամ այսպէս կոչուած՝ պսիխոգենետիկ, այլեւ սոցիալ-գենետիկ մեթոդով կատարուի: Միմիայն այսպիսի քննադատութիւնը կարող է գիտական լինել եւ ամբողջական ու ճիշդ պատկեր տալ ստեղծագործողի ու նրա ստեղծագործութեան մասին»:⁵⁵ Այս դիտակէտից էլ Խորէնին Թումանեանի՝ ստեղծագործութիւնը բնութագրում է իբրեւ «Գիտական աշխատատրական աշխարհի բանաստեղծութիւն», իսկ բանաստեղծին՝ հայ աշխատատր գիտացիութեան կեանքի, բնական եւ ընկերա-հոգեկան միջավայրի, նրա ապրումների ու իդէալների երգիչ, որ լի է անհատական յոյզերով, վշտերով, տենչանքներով եւ փիլիսոփայական խոհերով:

Իր միտքը հիմնատրեւելու համար Խորէնին անդրադառնում է ընկերային եւ հոգեկան այն միջավայրին, որտեղ ծեաւորուել է բանաստեղծի աշխարհայեցութիւնը: «Նա այնպէս է դիպում, սիրում ու պարկերացնում *բնութիւնը*, բացատրում է քննադատը, այնպէս է հասկանում ու սիրում մարդուն, այնպէս է սիրում կինն ու կեանքը, որպէս մտքով ինքնիշխանը, բայց հոգով ու բնութեամբ գիւղացին»⁵⁶: Հեղինակը առանձին անդրադառնում է Թումանեանի՝ իր բնորոշմամբ «սոցիալ-աշխատատրական» թեմայով գրուած ստեղծագործութիւններին: Իբրեւ ցայտուն օրինակ բերում է «Հառաչանք» պոէմը, որ, ինչպէս իր վերլուծութիւններով աշխատում է ցոյց տալ քննադատը, աշխատատր գիւղացիութեան ընկերային ծանր կեանքի տխուր հառաչանքների պարզ արտայայտութիւնն է, որտեղ բանաստեղծը ծերուկ գիւղացու միջոցով բացում է քաղաքական եւ ընկերային նոր յարաբերութիւնների պատճառով կեանքի ողբերգական կողմերի իրական պատկերները: Դիպաշարի վերապատմումի, վերլուծութիւնների ամբողջ ընթացքում բացայայտ կամ քողարկուած երեւում է քննադատի «սոցիալ-գենետիկ» հայեցակերպը, որ բանաստեղծի մտքերը իմաստատրում է քաղաքական նոր իրականութեան տեսանկիւնից: Օրինակ՝ այն հատուածը, որտեղ ծերունին բողոքում է իրենց հոգսաշատ կեանքից, մեկնաբանում է այսպէս. «Ահա ծեզ պրողնւար գիւղացիութեան սոցիալ-փնտրեակաւ կապարեալ ու փխուր պարկերը»:⁵⁷ Մի այլ տեղ ծերունու խօսքերը, թէ ինքը չի հասկանում՝ «ո՛վ է մեղատր», բացատրում է այսպէս. «Ծայր դեմոկրատական եւ նոյնիսկ յեղափոխական մտքերը, որ նա արփայայտում է դրանից յետոյ, կասկած չեն թողնում, որ նման կարգերն ու բարքերը յեղափոխականացնում են անգամ ութսունամեայ ծերունուն եւ ըմբոստացնում նման անիրաւ ու անարդար կարգերի դէմ»:⁵⁸

Խորէնին ընդգծում է Թումանեանի՝ չքատր գիւղացու ընկերային ծանր կացութիւնը նկարագրելու վարպետութիւնը: Օրինակ է բերում «Չոբան Չատու» պատմութիւնը, որ, ինչպէս մեկնաբանում է քննադատը, արտացոլում է ժամանակի վարքն ու բարքը, ընդգծում ազատասէր եւ արդարամիտ գիւղացու ընդվզումը ստի ու կեղծիքի դէմ, նրա պատուախնդրութիւնը՝ ապացուցելով, սակայն, թէ որքան անպաշտպան ու իրաւագուրկ են Չատին ու նրա նմանները: «Երբեք մեր բանաստեղծութեան մէջ սոցիալ-աշխատատրական մտփիւնները աւելի ուժեղ ու աւելի որոշ չեն հնչուել, գրում է Խորէնին: Հայ աշխատատր գիւղացին սոցիալական հասարակութեան այնպիսի պարզ ու յստակ գիտակցութիւն է երեւան բերում այս պոէմի մէջ, որ անգամ հայ քաղաքական-կուսակցական մամուլը չէ դրսեւորել... Մարդկանց ազատութեան ու սոցիալական հաւասարութեան եւ արդարութեան ու ճշմարտութեան աւելի գեղեցիկ ու գեղարունեստական պարկերացումն, քան «Հառաչանքն» է, մեր գրականութիւնը չունի»:⁵⁹

Խորէնին, իհարկէ, բարձր է գնահատում մարդկային-բարոյական ու բնական այն արժէքները, որ տեսնում ու կենդանագրում է Թումանեանն

իր երգերում: Բայց նա միշտ առաջին պլան է մղում այն միտքը, թե բանաստեղծի ստեղծագործությունը յատուկ արժեք է ներկայացնում նաեւ նոր գաղափարախօսութեան չափանիշներով:

Քննադատի դիտարկմամբ «Սասունցի Դաւիթ» պոէմը եւ «արդի գիւղացիութեան վիճակն է պատկերացնում», այսինքն՝ «նախապէս ազնուական-նախարարական» վէպը Թումանեանի մշակմամբ դարձել է «էապէս գիտացիական-ժողովրդական» եւ ցոյց է տալիս, որ «մեր գիւղացիութեան կացութիւնը միջնադարից դէսը շարքիչ է փոխուել»: Յիշում է այն դրուագը, երբ Դաւիթը, քննադատի բնութագրմամբ՝ «իր աւարական նախարարական քմահաճոյքով մարզանքների ու որսի ժամանակ կոխկոյրել է» գիւղացու արտը, ապա բերում է արտատէր պառաւի յանդիմանական խօսքերը՝ ուղղուած Դաւիթին, եւ եզրակացնում. «Անելի գեղեցիկ ու անելի պարզ հագիւ թէ հնար լինել արտայայտել ու պարկեշտորել կիսաճորտական վիճակում ապրող եւ իր աշխատանքի արդիւնքից զուրկ աշխատող գիւղացու հոգեբանութիւնը»:⁶⁰

Թումանեանի բազմալար քնարի երկրորդ գլխատր լարը համարելով հայրենասիրականը՝ Խորէնին նկատում է, որ Թումանեանի հայրենասիրութիւնը մի բնական զգացմունք է դէպի հայրենի, հարազատ բնութիւնը, ժողովուրդը: «Եթէ կ'ուզէք դա հայրենասիրութիւն չէ,- բացատրում է քննադատը,- այլ հայրենական բնասիրութիւն կամ բնապաշտութիւն ու ժողովրդասիրութիւն է: Այդպիսի հայրենասիրութիւնից հեռու է նախ ամէն տեսակ նեղ ազգայնականութիւնը եւ ապա՝ դա անբաժան է իրական ժողովրդասիրութիւնից ու իսկական մարդասիրութիւնից»:⁶¹ Մատնացոյց անելով «Նախերգանք»ում դրսեւորուած հայրենասիրութեան նրբերանգները՝ նկատում է, որ բանաստեղծի հոգու անյատակ վիշտն ու հայրենիքի խորունկ ցաւերը խառնուում են «մի հոգեպարար, մի հաշտարար վսեմ համազգացումի մէջ... որի համակիր ներապրումի մէջ ի մի են ծուլում անհատական ծանրաթախիծ ես-ն իր ապրումներով եւ հարուածուած կամ «զարկուած ու զրկուած» հայրենիքը իր «հազարատր ցաւերով»»:⁶²

Իհարկէ, Խորէնին այստեղ նոյնպէս չի մոռանում իր կանխադիր «սոցիալ-գենետիկ» մեթոդին տրամաբանութիւնը, որի համաձայն՝ այդպիսին կարող է լինել միայն «աշխատատր ու այդ իսկ պարտաճառով խաղաղասէր ժողովրդի իսկական հայրենասիրութիւնը»: Դա ժամանակի պարտադիր հարկն էր քննադատի որդեգրած նոր գաղափարախօսութեանը: Էականն ու մնայունը այն բանական ներդրումն է, որ ժամանակին կատարել են նա եւ՝ իր գաղափարակից քննադատները նոր ձեւաորոտող թումանեանագիտութեան մէջ:

Թումանեանի յոբելեանական յօդուածների մէջ իր ուրոյն տեղն ունի Վալերի Բրիաւլի՝ Հայաստանի Պոեզիան ժողովածուի առաջաբանում Թումանեանին նուիրուած հատուածը, որը բանաստեղծի ծննդեան 50ամեակի առթիւ յայտնում է Յառաջում: Անշուշտ, նախաձեռնողի՝ Սալլում-

եանի նպատակը մէկն էր. մէկ անգամ եւս ընդգծել, թէ հայ ժողովրդի բանաստեղծը ինչպիսի՝ գնահատանքի է արժանացել ռուս անուանի բանաստեղծի կողմից: Թումանեանի ստեղծագործական նկարագրի մասին Բրիտովն անում է կարծ, պատկերատու, հարեանցի թուացող դիտարկումներ, որոնք հեռու գնացող խորքային կոսիկումներ են պարունակում իրենց մէջ: Ամփոփելով իր միտքը Թումանեանի մասին՝ Բրիտովը գրում է. «Ամբողջութեամբ վերցրած՝ Թումանեանի պոեզիան ինքը Հայաստանն է՝ հին ու նոր, որը յարութիւն է առնում եւ տպավորում բանաստեղծութիւնների մէջ մեծ վարպետի ճեղքով»⁶³:

Ուշագրաւ է նաեւ Գորոդեցկու «Իմաստուն եւ նուրբ» յօդուածը՝ տպագրուած *Заквказское Слово* թերթում: Ռուս մտաւորականի՝ Թումանեանին գնահատելու նոր փորձը գրեթէ նոյնանում է բրիտովեան բնութագրի հետ: Թումանեանի ստեղծագործութիւնը եւ անձը դիտարկելով իբրեւ մէկ ներդաշնակ ամբողջութիւն՝ Գորոդեցկին գրում է. «Հասկանալ Յովհաննէս Թումանեանին նշանակում է հասկանալ Հայաստանը՝ խաղաղ երկրային կեանքի նրա վաղեմի գաղափարներով, բնութեան ու մարդկանց համագործակցութեան մէջ հովուերգական կեանքի նրա ծգտումով, հակառակ պայմանութեան ողբերգական ընթացքի... Նրա ստեղծագործութիւնները յուշարձան են Հայաստանի պայմական տառապանքների եւ ուխտը՝ նրա հարուստ ապագայի...»⁶⁴: Գորոդեցկին, որ տարիների մտերմութեամբ կապուած էր Թումանեանի հետ, բանիմաց դիտարկումներով բացում է նրա մարդկային հազուագիւտ ներաշխարհի ու ստեղծագործութեան շատ նրբերանգներ: Թերթի նոյն համարում տպագրում են նաեւ Լեւան Կիպիանու⁶⁵ եւ Վարդգէս Ահարոնեանի յօդուածները: Առաջինում հեղինակը Թումանեանին համարում է երկու՝ հայ եւ վրաց ժողովուրդների մշակութային անտրոհելի կապի կարեւոր շղթան: Իսկ երկրորդ՝ «Հայրենի Լեռների Երգիչը» յօդուածում Ահարոնեանը զարգացնում է այն միտքը, թէ Թումանեանը այն եզակի անհատներից էր, որ ամէն ինչում՝ թէ՛ ստեղծագործելիս, թէ՛ կեանքում առհասարակ, դնում են իրենց շունչն ու հոգին՝ դառնալով սեփական ժողովրդի անցեալը, ներկան եւ ապագան ամբողջացնող մի կոթող:

1919ի Տարազի, հմ. 10ում (Հոկտեմբեր) տպագրուած յօդուածը՝ Տիգրան Նազարեանի ստորագրութեամբ, կարծես իւրօրինակ ամփոփումը լինի յոբելեանական բազմաթիւ հանդիսութիւնների ու հրապարակումների: «Առաջին անգամն էր,- գրում է Նազարեանը,- որ Թիֆլիսի մշտնջենականութիւնը, Թիֆլիսի հասարակութիւնը՝ առանց ազգերի ու կուսակցութիւնների խտրութեան, ինքնաբերաբար ու սրտաբաւով կերպով այնպիսի ջերմ ու այնպիսի վայելույց ցոյցեր արաւ ու յարգանքներ փոխաւ հայ գրականութեանը ի դէմս նրա փայլուն ներկայացուցիչ Յովհ. Թումանեանի: Առաջին անգամն էր, որ մեր գրողներին ու բանաստեղծներին տեսանք՝ կուսակցութիւնների ու լրագրերի կապանքներից ազատագրուած եւ միմ-

եանց մօտ նստած. Առաջին անգամն էր, որ տեսանք հրապարակիչներին ու ընդհանրապես մեր ընտիր գրողների ստեղծագործական աշխատանքի պտուղները վայելողներին՝ նրանց որոնելիս, մեծարելիս...»⁶⁶: Ասումը խօսուն վկայություն է, որ Թումանյանից առաջ դեռևս ոչ մի հայ գրող իր ժամանակակիցների, հայ եւ այլազգի անմիջական շրջապատի, պետական այրերի եւ վերջապես հարազատ ժողովրդի կողմից այնպես սիրով ու ակնածանքով մեծարանքի չէր արժանացել՝ իբրեւ ազգանուէր գործիչ, իբրեւ մարդասէր ու նուիրեալ քաղաքացի, ինչպէս Թումանյանը իր յորելեանի օրերին: Չափազանցություն չի լինի, եթէ ասենք, որ Թումանյանի ծննդեան 50ամեակի տօնակատարությունները հայ մշակույթի պատմութեան մէջ մնացին եզակի եւ անկրկնելի:

Այսօր արդէն նշում է Թումանյանի ծննդեան 150ամեակը, եւ պատուի ու պատասխանատուութեան խնդիր է դնում նրա նուիրական երազանքն իրականացրած ներկայ սերնդի առջեւ՝ արժանիէն հատուցելու ազգային մեծ բանաստեղծին այն ամէնի համար, ինչ նա իր հանճարի ուժով, իր եւ իր գաւակների կեանքի գնով արեց յանուն հայ ժողովրդի ու նրա ազգային մշակույթի յարատեւութեան:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Նրա գործուն մասնակցութեամբ են իրականացուել Շիրվանզադէի, Յովհաննէս Յովհաննիսեանի, Լէոյի յորելեանական հանդիսությունները:
- ² Յովհաննէս Թումանյան, *Երկերի Լիակապար ժողովածու Տասը Հատորով, Հտոր. 6*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատ., 1994, էջ 173-4:
- ³ *Հորիզոն*, Թիֆլիս, 30 Դեկտեմբեր 1909: «Պատշաճատուութիւն, վայելչութիւն» բառերը վերցրած են «Ի՛նչ ենք Ուզում Ասել» անստորագիր առաջնորդողից, որտեղ բացատրում է «Յորելեանների Դէմ» յօդուածի մէջ առաջ քաշուած հարցը: Հնարատը է, որ առաջնորդողը գրած լինի Թումանյանը, սակայն այժմ բանասիրական փաստարկներով հաստատել անկարելի է: Տե՛ս նաեւ՝ Թումանյան, *Երկերի Լիակապար ժողովածու, Հտոր. 6*, էջ 598-9:
- ⁴ Թումանյան, *Հտոր. 10*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» Հրատ., 1999, էջ 304:
- ⁵ Լեւոն Հախվերդեան, *Թումանյանի Կեանքը*, Երեւան, «Հայաստան» Հրատ., 1969, էջ 71-2:
- ⁶ Եղիշէ Չարեցնի Անուան Գրականութեան եւ Արուեստի Թանգարան (ԳԱԹ), Թումանյանի Ֆոնդ (ԹՖ), 2658 (1299):
- ⁷ *Ձառաջ*, Թիֆլիս, 20 Փետրուար 1919:
- ⁸ ԳԱԹ ԹՖ, 2143 (1083):
- ⁹ *Մշակ*, Թիֆլիս, 20 Փետրուար 1919:
- ¹⁰ ԹԹ (Թումանյանի թանգարան) ԳԳ (գլխատր գոյքամատեան), 1082 (I) 20:
- ¹¹ ԹԹ ԳԳ, 1083 (I) 21:
- ¹² ԳԱԹ ԹՖ, 2655 (1295):
- ¹³ *Փարոս*, Թիֆլիս, 1 Մարտ 1919, էջ 3:
- ¹⁴ *Ժողովրդի Ձայն*, Թիֆլիս, 23 Մարտ 1919:

¹⁵ *Յառաջի նոյն համարում տպագրում է Թումանեանի կենսագրականը:*

¹⁶ *Ժողովրդի Ձայն, 20 Փետրուար 1919:*

¹⁷ Թումանեան մանկագրի գրական ուղին սկսում է 1890-ին, երբ Ղազարոս Աղայեանի խորհրդով «Արեւ եւ Լուսին» առասպելը տպագրում է *Աղբիւր* մանկական ամսագրում: Իհարկէ, յայտնի է, որ դեռեւա 1886-ին Թումանեանը գրել էր իր նշանաւոր «Շունն Ու Կատուն», որը, սակայն, տպագրում է անելի ուշ (1892): Մանկագրութեան ասպարէզում Թումանեանի գրիչը առաւել բազմաբեղուն է դառնում 1905-ից, երբ սկսում է աշխատակցել *Հասկեր* մանկական ամսագրին, իսկ անելի ուշ՝ 1907-ին, մասնակցում է *Լուսարբեր* դասագրքի ստեղծման աշխատանքներին: Մանկական գրականութիւնը հարստանում է սքանչելի ու գողտրիկ բանաստեղծութիւններով, փոխադրութիւններով ու թարգմանութիւններով, ժողովրդական բանահիւտութեան աննման մշակումներով: Պատահական չէ 1908-ին իշխանուհի Մարիամ Թումանեանի ծեռնարկը՝ «Մանկական Գրադարան» մատենաշարի հրատարակութիւնը, ինչը որոշակիօրէն հաստատում է՝ բանաստեղծի մանկական երկերը սիրուած ու սպասուած էին եւ բացառիկ տեղ ունէին մանկական գրականութեան մէջ:

¹⁸ *Ժողովրդի Ձայն, 20 Փետրուար 1919:*

¹⁹ Նոյն:

²⁰ Հանդէսի այն համարը, որտեղ յօդուածի սկիզբն է, չի պահպանուել:

²¹ *Հայ Համայնք, Նոր Նախիջեան, 26 Մայիս 1919, էջ 247:*

²² Նոյն:

²³ Նոյն, էջ 249:

²⁴ *Մշակ, 20 Փետրուար 1919:*

²⁵ Նոյն:

²⁶ Նոյն:

²⁷ Նոյն:

²⁸ Այդ մասին անելի մանրամասն տե՛ս՝ Եւա Մնացականեան, «Թումանեանը եւ Բանավէճերը Բանահիւսական Թեմաների Գրական Մշակումների Շուրջ», *Հայկազեան Հայագիտական Հանդէս, Հտր. ԼԸ., 2018, էջ 405-20:*

²⁹ Գորոզեցկին Թումանեանին նուիրած իր յօդուածում գրում է. «*Հայկական բանաստեղծութեան համար Թումանեանն արեւ է նոյնը, ինչ որ Պուշկինը մեր գրականութեան համար: Ժողովրդական լեզուի լաւագոյն փորապետողն ու իմացողը՝ այդ լեզուն մըցրել է գրականութեան մէջ, մշակել ժողովրդական էպոսը, բազմաթիւ լեզնեղներ ու հեքիաթներ*» (Ս. Գորոզեցկի, «Յովհաննէս Թումանեան», Մարտիրոս, Ապրիլ, 1923):

³⁰ Վահան Տերեան, *Երկերի ժողովածու, Հտր. 3, Երեւան, «Հայաստան» Հրատ. 1975, էջ 89:*

³¹ *Մշակ, 20 Փետրուար 1919:*

³² Նոյն:

³³ Նոյն:

³⁴ Ե. Տէր Մարտիրոսեան, «Յովհ. Թումանեան», *Այլը Գրական ժողովածու, 1 գրքոյկ, Պիատիգորսկ, 1919, էջ 35:*

³⁵ Նոյն:

³⁶ Նոյն, էջ 43:

³⁷ Նոյն, էջ 50-1:

³⁸ Նոյն, էջ 51:

³⁹ Մշակ, 20 Փետրուար 1919:

⁴⁰ Յօդուածի դրոյթները Անանունը ներկայացնում է նաեւ 1913 Ապրիլի 6ին գրական-գեղարուեստական ակումբում կայացած դասախօսութեան ընթացքում, որի մասին *Քաջուի Ձայն* թերթում կայ երկու անդրադարձ: Զեկուցման դրոյթների դէմ հանդէս են գալիս Սիմոն Յակոբեանը եւ Գրասէրը (Յօլակ Խանգադեան): Դասախօսութիւնը առիթ է դառնում, որ Խանգադեանը վերանայի «Անցեալի Մեծարանք» յօդուածը եւ նոյն *Քաջուի Ձայն*ում տպագրի իր դիտարկումները յօդուածի վերաբերեալ: Ծաւալում է մեծ բանավէճ Անանունի եւ Խանգադեանի միջեւ: Չհամաձայնելով Անանունի տեսակէտին՝ Խանգադեանը պաշտպանում է այն միտքը, որ «*Թումանեանը չի մեծարում, չի իղէպականացնում, այլ օրեկրօ գեղարուեստագէտի բարեխղճութեամբ վերադրադրում է հայ գիտի ցաւալի իրականութիւնը*» (*Քաջուի Ձայն*, 21 Ապրիլ 1913): Գրասէրը թերութիւն է համարում այն, որ յօդուածագիրը «Յովի. Թումանեանի Քնարը» վերնագրի ներքոյ շօշափել է բանաստեղծի «բազմալար եւ խորահնչիւն քնարի մի քանի լարը միայն»: Իբրեւ բացթողում՝ Խանգադեանը մատնանշում է նաեւ, որ Անանունը չի անդրադարձել Թումանեանի թարգմանութիւններին: «*Մեր փայլուն բանաստեղծը թարգմանական այնպիսի գոհարներ է փունջ, որոնց նմանը, իմ կարծիքով, հայոց թարգմանական գրականութիւնը չափ քիչ ունի ...: Այդ մասին է ոչ մի խօսք չէր գրել Պ. Անանունի յօդուածում*» (նոյն): Բանավէճին անուղղակիօրէն մասնակցում է նաեւ Սուրխաթեանը Մշակի հմ. 104, 105ում («Անցեալի Մեծարանքը» յօդուածի արձագանգների մանրամասները տե՛ս մեր՝ «Դափթ Անանունի «Անցեալի Մեծարանքը» Յօդուածը՝ *Բանքեր Հայագիտութեան*, 2016:3, Երեւան, էջ 159-73):

⁴¹ *Քաջուի Ձայն*, Բաքու, 28 Ապրիլ 1913:

⁴² *Հայ Գրականութիւն*, հմ. 4, 1/14 Նոյեմբեր, Զմիւտնիա, Տպ. Քեշիշեան, 1912, էջ 21-2:

⁴³ Նոյն, էջ 22:

⁴⁴ Նոյն:

⁴⁵ Նոյն, էջ 23: Գարուն ավանախում Թումանեանին նուիրուած յօդուածները առիթ էին դարձել նաեւ, որ պոլսահայ մտաւորականութիւնը նորովի հայեացք նետի բանաստեղծի արունաստին: Նոյն 1912ին Պոլսի *Կոհակում*⁴⁵ Օշականի միտքը այլ ձեւակերպումներով զարգացնում է Գ. Գապայեմեանը՝ Թումանեանին համարելով հանճարեղ բանաստեղծ. «*Կան հանճարներ որոնք մշտապէս ու տեւական են ճիշտ այն աղբիւրներուն պէս, որոնք շարունակ կը հոսին առանց կանգ առնելու, առանց դադրելու իրենց սովորական ընթացքէն, եթէ նոյնիսկ երաշտ եղանակ մը ցաւալիօրէն ցամբեցնէ ամէն ինչ*» (*Կոհակ*, հմ. 1, Պոլիս, 1912, էջ 8):

1912ին Պոլսի Ազատամարտ օրաթերթում (հմ. 916, 917, 918, 921, 922, 923) շնորոնակաբար տպագրում է Ռ. Դարբինեանի ընդարձակ գրախօսականը՝ նուիրուած Գարուն ավանախին: Յօդուածի վերջին՝ ճոր մասում, Դարբինեանը համառօտակի անդրադառնում է Թումանեանին նուիրուած յօդուածներից մէկին միայն՝ Պօղոս Մակինցեանի «Դիմագծեր»ին՝ բացարձակ լռութեան մատնելով Անանունի «Անցեալի Մեծարանքը»: Դա պատահական չէր. դաշնակցական գաղափարախօսին մարքսիստ քննադատի յօդուածը չէր կարող բաւարարել ո՛չ գե-

դարուստական բնագրի վերլուծության մեթոդի, ո'չ աշխարհայեացքային ելակետի առումով: Դարբինեանը քննորոշ քաղաածքներ է անում Մակինցեանի յօդուածից եւ լռելեայն համաձայնելով քննադատի բնութագրումներին՝ եզրափակում է. «Որպէս գեղարուեստական տաղանդ Յովհ. Թումանեան անտարակոյս մեր մեծագոյն ազգային բանաստեղծն է. եւ կ'արժէ որ թրջահայ ընթերցողն ալ մտերմանար անոր՝ այնպէս, ինչպէս ռուսահայ ընթերցողը»:

⁴⁶ 1914ի գարնանը Տէրեանը հանդէս է գալիս «Հայ Գրականութեան Գալիք Օրը» զեկուցմամբ, որտեղ անդրադառնում է նաեւ Թումանեանին: Բարձր գնահատելով նրան՝ իբրեւ գեղարուեստագէտի եւ ժողովրդական հոգու իմաստուն ու վսեմ թարգմանի՝ Տէրեանը նշում է, որ «նա կանգնած է իր յատուկ ճանապարհի վրայ, որ լի է գեղարուեստական հրաշալիքներով, սակայն նա կը մնայ իբրեւ մի ունիկում, եւ նրա ճանապարհը չի լինելու ապագայ հայ պոեզիայի ճանապարհը» (Վ. Տէրեան, *Երկերի ժողովածու*, Հտր. 3, էջ 72-3):

⁴⁷ Մշակ, 20 Փետրուար 1919:

⁴⁸ Այդ մասին Թումանեանն ասել է 1916 Դեկտեմբերի 30ին Գրողների Ընկերութեան երեկոյթում, Սուրբաթեանի «Ռուսահայ Նորագոյն Բանաստեղծութիւնը» դասախօսութիւնից յետոյ՝ խօսքն ուղղելով սկսնակ գրողներին. «Ռուսահայ բանաստեղծութիւնը երեք շրջան է ունեցել: 1857 թուականին ուսանող Ռ. Պապկանեանը՝ Գամառ-Քաթիպան, հրապարակել է իր «Ազգային Երգարան» անունով բանաստեղծութիւնների տպագրակն ու դրանով սկիզբն է դրել առաջին շրջանի բանաստեղծութեան:

Նրանից երեսուն տարի յետոյ, 1887 թուականին ուսանող Յ. Յովհաննիսեանը հրապարակեց իր բանաստեղծութիւնների առաջին գիրքը, ու սկիզբն առաւ երկրորդ շրջանի բանաստեղծութիւնը:

Յովհաննիսեանից երեսուն տարի յետոյ էլ, 1908 թուականին դարձեալ ուսանող՝ Վ. Տէրեանը հրապարակեց իր «Մթնշաղի Անուշներ» ու առաջ եկաւ երրորդ, նորագոյն շրջանը, որի մասին հանդիսատար ու հաւաքական կերպով խօսում ենք էսօր Հայ գրողների ընկերութեան մէջ:

Ինչպէս տեսնում էք՝ եւ ընկնում եմ երկրորդ շրջանի մէջ եւ կանգնած եմ հին շրջանի ու նորագոյնի մէջտեղը» (Թումանեան, Հտր. 7, 1995, էջ 300-1):

⁴⁹ 1915 Նոյեմբերին Նուարդ Թումանեանին գրած նամակում Տէրեանը խոստովանում է անում. «Թումանեանի գրած ամէն մի տողը ինձ համար հետաքրքրող է եւ նշանակալից, թէւ իբրեւ պոէտ եւ ինձ միանգամայն օտար եմ զգում նրան, այսինքն՝ նրա պաֆոսը իմ պաֆոսը չէ՝ եւ նրան երկրպագու եմ եւ սիրում եմ, բայց նրա աշխարհին իմ աշխարհը չէ (յօսով եմ, սխալ չէք ըմբռնի ինձ - սրանով եւ չեմ մտարել նրա մեծութիւնն ու նշանակութիւնը, հասկանում էք ինձ, նոյնը կարող էի ասել, օրինակ, մի Շեքսպիրի մասին)» (Վ. Տէրեան, *Երկերի ժողովածու*, Հտր. 4, Երեւան, «Սովետական Գրող» Հրատ., 1979, էջ 240):

⁵⁰ Էդ. Զրբաշեան, *Թումանեանը եւ Հայ Գրականութեան Աւանդոյթները*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատ., 1994, էջ 404-5:

⁵¹ Մշակ, 20 Փետրուար 1919:

⁵² Նոյն:

⁵³ Նոյն:

⁵⁴ *Բանտոր*, ամսագիր, Թիֆլիս, Հմր. 1, 1919, էջ 25:

⁵⁵ *Յառաջ*, 20 Փետրուար 1919:

⁵⁶ Նոյն:

⁵⁷ *Աշխարատոր*, Թիֆլիս, 14 Մարտ 1919:

⁵⁸ Նոյն, 15 Մարտ 1919:

⁵⁹ Նոյն:

⁶⁰ *Յառաջ*, 20 Փետրուար 1919:

⁶¹ Նոյն. նաեւ՝ *Աշխարատոր*, 19 Ապրիլ 1919:

⁶² *Աշխարատոր*, 26 Ապրիլ 1919:

⁶³ *Յառաջ*, 20 Փետրուար 1919:

⁶⁴ *Закавказское Слово*, 20 Փետրուար 1919:

⁶⁵ *Закавказское Слово* թերթի 26 Փետրուարի 1919-ում տպագրում է Լեւ Կիպիանու «О Капле Меда» (Մի կաթիլ մեդրի մասին) խորագրով յօդուածը: Նա բարձր է գնահատում Թումանեանին՝ իբրեւ գրողի եւ մարդկային տեսակի, վկայակոչելով այդ առթիւ յորելեանական հանդիսութիւնները, հասարակութեան, յատկապէս երեխաների կողմից ինքնաբոլս կազմակերպուած միջոցառումները, վրաց կառավարութեան ներկայացուցիչներ ժողդանիայի, Գեգեչկորու եւ այլոց յորելեանական հեռագրերը, դրանցում արտայայտուած մեծագոյն սէրն ու յարգանքը բանաստեղծի հանդէպ:

⁶⁶ *Տարագ*, Հոկտեմբեր 1919, էջ 68:

ASSESSING TOUMANYAN'S LITERARY WORKS ON HIS 50TH BIRTHDAY (1919) (Summary)

EVA MNATSAKANYAN

mnacakanyaneva@mail.ru

In February-March of 1919, Toumanyan's 50th birthday was celebrated with great, pannational enthusiasm. Though the poet was against such a celebration, it turned into a real national holiday. On the occasion various diverse articles were written evaluating the writer's literary works.

The paper draws a panoramic picture of the articles written and analyzes their content, focusing on the aspects which were more highlighted and appreciated, the impact his literature had on Armenian literature and poetry in particular, as well as those aspects which touched upon his personality and character, and assesses how genuine Toumanyan was in his literary career.